



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի երկրորդ կիսամյակում (վերլուծություն)

2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 97396 գործարք, որոնց քանակը, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 16.6 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 14.5 %-ով :

2015 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 27417 օտարման գործարքների 71.2 %-ը կազմել է առուվաճառքը, 27.9 %-ը՝ նվիրատվությունը և 0.9 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.1 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 40.6 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 21.3 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 0.4 %-ով: 2015 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 7521 առուվաճառքի գործարքների 67.0 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի երկրորդ կիսամյակում, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 44.7 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 4.7 %-ով:

2015 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	երկրորդ կիսամյակ 2014 թ.	երկրորդ կիսամյակ 2015 թ.	առաջին կիսամյակ 2015 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356700	356600
Քանաքեռ-Զեյթուն	282700	282800	282700
Նոր Նորք	252700	253400	253100
Ավան	260200	260900	260500
Էրեբունի	251000	252200	251800
Շենգավիթ	256500	257300	257000
Դավթաշեն	275200	276200	275600
Աջափնյակ	249600	250300	249900
Մալաթիա-Սեբաստիա	242400	243500	243000
Նուբարաշեն	156100	156900	156600
Միջինը Երևանում	273700	274400	274100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի շուկայական միջին գները, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել են 0.1 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 0.3%-ով:

2015 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 2085 բնակարան, որոնց քանակը 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 11.7 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 13.5 %-ով:

2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		երկրորդ կիսամյակ 2014 թ.	երկրորդ կիսամյակ 2015 թ.	առաջին կիսամյակ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116000	116000
	Ապարան	57550	58000	57600
	Թալին	65900	66300	65900
Արարատ	Արտաշատ	97000	98000	97700
	Մասիս	115750	115800	115800
	Վեդի	100700	101500	101100
	Արարատ	75500	76950	76100
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100	154100
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87550	87500
Գեղարքունիք	Սևան	99200	99400	99200
	Գավառ	59850	60200	60000
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44800	44950	44800
	Ճամբարակ	28700	28700	28700
Լոռի	Վանաձոր	88500	88500	88500
	Ստեփանավան	74500	74600	74600
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55050	55350	55200
	Տաշիր	47300	47350	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20300	20500	20300
Կոտայք	Աբովյան	155100	155100	155100
	Նոր Հաճն	128600	128550	128500
	Բյուրեղավան	108150	108200	108200
	Եղվարդ	109400	109450	109400
	Հրազդան	63850	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292400	292400
	Չարենցավան	85550	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109250	109200
	Արթիկ	66700	66850	66750
	Մարալիկ	40700	40850	40700
Սյունիք	Գորիս	122500	123100	122900
	Կապան	93150	94200	93700
	Սիսիան	91300	92000	91800
	Մեղրի	81000	82400	81550
	Ագարակ	46900	47350	47200
	Քաջարան	94700	94600	94600
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95000	94950
	Եղեգնաձոր	125550	125700	125550
	Ջերմուկ	112950	112950	112900
Տավուշ	Դիլիջան	113600	114800	113900
	Իջևան	118300	118400	118300
	Բերդ	60250	60300	60200
	Նոյեմբերյան	49900	50200	49900
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի շուկայական միջին գները, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել են 0.2%-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 0.3%-ով:

2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 2315 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևանում՝ 730, մարզերում՝ 1585 գործարք: 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 12.8 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 20.9 %-ով, իսկ մարզերում՝ 9.5 %-ով: 2015 թվականի երկրորդ կիսամյակում, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 16.3 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 8.4 %-ով, իսկ մարզերում՝ 19.5 %-ով:

2015 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երկրորդ կիսամյակ 2014 թ.	Երկրորդ կիսամյակ 2015 թ.	առաջին կիսամյակ 2015 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150800	150800	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը 2015 թվականի առաջին կիսամյակի և 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		երկրորդ կիսամյակ 2014 թ.	երկրորդ կիսամյակ 2015 թ.	առաջին կիսամյակ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94900	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41050	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100700	100100
	Ստեփանավան	90000	91000	90200
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157200	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	119150	118600
	Արթիկ	63100	63200	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100600	100100
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84550	84500
	Ազարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90100	90050
	Եղեգնաձոր	116600	116700	116600
	Զերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	115200	113300
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ

Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի առաջին և 2014 թվականի երկրորդ կիսամյակների համեմատ, աճել են 0.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել է 9371 միավոր (4825.78 հա) հող, որից Երևանում՝ 578 միավոր (47.97 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 5494 միավոր (4485.18 հա), որից Երևանում՝ 34 միավոր (3.83 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 2645 միավոր (228.02 հա), որից Երևանում՝ 296 միավոր (23.44 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 887 միավոր (64.10 հա), որից Երևանում՝ 231 միավոր (19.41 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 97 միավոր (29.69 հա), որից Երևանում՝ 17 միավոր (1.29 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 32 միավոր (9.30 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 209 միավոր (6.71 հա),
- ջրային հող՝ 6 միավոր (2.13 հա).
- անտառային հող՝ 1 միավոր (0.65 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 7766 միավորի (4242.03 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 448 միավոր (38.61 հա), նվիրատվության գործարք՝ 1498 միավոր (568.21 հա), որից Երևանում՝ 119 միավոր (9.25 հա) և փոխանակության գործարք՝ 107 միավոր (15.53 հա), որից Երևանում՝ 11 միավոր (0.11 հա):

Հանրապետությունում 2015 թվականի երկրորդ կիսամյակում, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 4.4 %-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.9 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 5.2 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 14.9 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1089.62 հա, որից 1053.41 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 27.8 %-ը կամ 2162 գործարք (800.60 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 149 միավոր (7.93 հա), իսկ 71.4 %-ը կամ 5543 միավորը (3425.36 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 294 միավոր (30.60 հա): 2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 61 գործարք (16.17 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2015 թվականի երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	3	0.21	62	3.08	84	4.64	22	1.44	13	1.05	158	16.90	101	11.21
Արագածոտն	106	92.12	0	0.00	14	1.06	18	9.23	354	415.90	1	0.01	130	14.93	7	1.58
Արարատ	136	166.75	10	0.59	119	9.10	85	4.13	428	235.78	1	0.02	214	19.73	26	1.25
Արմավիր	34	92.48	5	0.85	6	0.33	11	0.34	542	960.93	1	0.04	318	34.25	12	0.39
Գեղարքունիք	28	10.35	4	0.61	43	3.85	60	4.19	298	161.31	3	1.01	60	8.07	13	1.06
Լոռի	53	25.59	8	8.04	57	2.19	81	2.66	997	603.74	2	0.05	51	5.64	15	0.24
Կոտայք	127	195.99	7	0.46	330	5.71	52	1.64	550	357.24	4	0.24	337	38.20	39	3.84
Շիրակ	102	38.27	4	1.66	39	0.67	49	2.65	285	299.62	2	0.16	67	7.54	7	0.40
Սյունիք	13	34.21	1	0.09	23	0.61	12	1.55	161	119.22	1	0.51	37	3.22	6	0.17
Վայոց ձոր	46	50.01	1	0.57	4	0.04	9	0.24	108	62.33	1	0.10	18	1.59	8	0.33
Տավուշ	22	10.76	9	0.56	17	1.39	48	1.96	71	22.16	1	0.07	49	4.16	9	2.06
Ընդամենը	667	716.53	52	13.64	714	28.03	509	33.23	3816	3239.67	30	3.26	1439	154.23	243	22.53

Ստորև ներկայացվում է 2015 թվականի երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	81	2.25	2	0.10	37	1.19	42	0.96	68	5.68	0	0.00	1	0.11	25	1.89	42	3.68
Արագածոտն	4	0.03	0	0.00	1	0.02	3	0.01	129	102.14	101	91.88	0	0.00	13	1.05	15	9.21
Արարատ	9	0.123	1	0.05	1	0.003	7	0.07	338	179.77	133	166.07	9	0.54	118	9.10	78	4.06
Արմավիր	6	0.11	0	0.00	2	0.02	4	0.09	48	78.08	32	76.68	5	0.85	4	0.31	7	0.24
Գեղարքունիք	11	0.26	0	0.00	8	0.08	3	0.18	115	17.34	19	8.95	4	0.61	35	3.77	57	4.01
Լոռի	26	0.25	0	0.00	4	0.03	22	0.22	143	35.64	23	23.00	8	8.04	53	2.16	59	2.44
Կոտայք	224	0.953	1	0.003	217	0.90	6	0.05	291	202.38	126	195.52	6	0.46	113	4.81	46	1.59
Շիրակ	53	3.36	2	1.21	18	0.25	33	1.90	55	9.55	16	7.91	2	0.45	21	0.43	16	0.76
Սյունիք	18	0.68	1	0.09	13	0.22	4	0.37	30	33.79	12	32.21	0	0.00	10	0.40	8	1.18
Վայոց ձոր	5	0.591	1	0.57	3	0.02	1	0.001	54	50.11	45	49.86	0	0.00	1	0.01	8	0.24
Տավուշ	10	0.35	2	0.11	4	0.09	4	0.15	86	14.33	22	10.76	7	0.46	13	1.30	44	1.81
Ընդամենը	447	8.96	10	2.13	308	2.82	129	4.00	1357	728.81	529	662.84	42	11.52	406	25.23	380	29.22

Հանրապետությունում 2015 թվականի երկրորդ կիսամյակում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 138 գործարք /53.69 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2015 թվականի երկրորդ կիսամյակում, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 6.2 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 25.3 %-ով, իսկ մարզերում՝ աճել է 8.6 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 25.7 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 8.8 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 3.5 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 2.3 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի երկրորդ կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	79	70.27	36.8	1886.2	350.9	196	144.17	365.0	12000.0	3755.0
Ապարան	3	0.36	147.6	510.0	346.7	30	20.38	86.5	2727.3	644.9
Թալին	16	19.42	9.5	400.0	149.3	80	154.54	93.6	5494.5	815.6
Ծաղկահովիտ	3	1.84	190.0	220.0	200.7	27	91.03	79.5	1000.0	357.6
Արարատի մարզ										
Արտաշատ	59	73.10	68.5	5132.5	1251.4	181	72.22	335.1	10833.3	2629.2
Մասիս	33	25.26	60.3	2333.0	708.1	84	74.68	200.0	11904.8	3130.5
Վեդի	41	67.72	63.2	5031.3	1597.7	147	78.19	207.0	10795.1	1897.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	9	9.75	73.5	2362.4	691.7	235	442.58	294.3	9090.0	1266.4
Բաղրամյան	1	6.00	100.0	100.0	100.0	98	288.00	90.6	2561.1	923.3
Վաղարշապատ	22	60.93	57.7	1680.6	380.6	198	160.89	444.4	11764.7	1971.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	2.04	561.0	661.5	611.3	125	40.21	199.8	1875.0	472.5
Ճամբարակ						2	0.89	60.5	953.3	352.0
Մարտունի	15	5.89	64.6	2083.3	514.3	70	8.53	51.1	2850.0	820.3
Սևան						29	10.87	52.2	2134.8	352.2
Վարդենիս	2	1.02	354.8	555.5	455.2	68	100.23	41.2	2575.1	428.0
Լոռու մարզ										
Ալավերդի	5	1.49	167.1	2564.9	895.9	109	39.77	170.4	6424.2	590.8
Գուգարք	8	0.89	172.5	1454.9	706.7	110	32.74	234.6	6065.9	812.1
Սպիտակ	1	0.13	1248.6	1248.6	1248.6	12	3.13	250.0	5555.5	684.2
Ստեփանավան	5	17.00	169.8	1274.3	696.4	46	31.05	90.6	1686.6	404.2
Տաշիր	4	3.48	187.0	1487.9	881.6	718	495.75	45.3	1384.4	182.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	43	55.77	78.6	4532.6	1097.5	184	122.19	279.3	11942.7	3954.8
Եղվարդ	71	133.74	36.6	32341.9	1002.3	282	195.91	174.4	11971.8	2482.9
Հրազդան	12	6.00	107.5	973.8	402.3	69	33.75	130.5	10256.4	1100.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	2.26	115.5	388.1	221.7	95	101.64	252.0	1693.1	637.7
Ամասիա						9	20.50	40.9	261.0	134.3

Անի	12	5.65	78.4	828.0	390.7	112	94.14	110.6	546.9	455.5
Աշոցք						13	23.90	58.5	215.8	138.5
Արթիկ						50	52.54	79.4	1428.6	507.3
Սյունիքի մարզ										
Գորիս						16	17.91	92.6	1023.2	800.0
Կապան	4	2.78	357.9	1300.0	694.9	43	31.20	120.0	841.6	401.2
Մեղրի	6	28.29	137.5	714.3	380.6	49	26.05	193.0	3000.0	760.0
Սիսիան	2	1.14	150.0	159.5	154.7	53	44.06	46.3	1977.4	615.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	26	11.87	21.7	1332.0	260.9	53	33.01	125.0	10000.0	1806.8
Վայք	19	38.0	44.7	757.4	384.6	54	29.09	58.8	1430.7	577.5
Տավուշի մարզ										
Բերդ						29	7.30	213.3	3783.8	670.0
Իջևան	20	9.54	154.4	3300.0	1102.0	31	8.76	267.5	9454.5	1452.7
Նոյեմբերյան	2	1.22	825.0	1034.8	929.9	11	6.10	46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի երկրորդ կիսամյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման(տնամերձ)հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	10	8110.2	112.7	5897.1	2462.9	109	111056.5	130.7	22200.0	2588.7
Ապարան	2	412.5	273.8	5622.2	2948.0	4	9390.0	124.1	609.6	390.3
Թալին	1	1929.0	151.2	151.2	151.2	11	16209.3	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						2	7815.0	60.0	214.3	93.3
Արարատի մարզ										
Արտաշատ	57	50972.8	175.0	5488.4	625.1	57	69700.2	173.9	7140.3	905.2
Մասիս	55	35765.1	799.6	4093.8	2581.6	110	79224.7	187.5	25000.0	1209.5
Վեդի	6	4217.0	150.5	2000.0	515.5	45	46124.0	126.1	5000.0	663.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	60.0	359.1	359.1	359.1	123	133075.0	131.6	9090.9	1215.2
Բաղրամյան	3	3000.0	222.0	234.0	230.0	7	13686.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						180	186491.8	197.4	26528.4	1531.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	3	5289.0	269.7	272.1	270.5	8	10694.4	186.6	1084.3	683.9
Ճամբարակ						4	4621.0	71.3	2286.2	146.8
Մարտունի	14	13326.0	73.5	666.7	236.0	26	34157.6	119.3	5000.0	280.3
Սևան	4	5662.5	411.0	413.8	412.0	8	8155.6	240.0	3110.4	335.8
Վարդենիս	14	13405.0	66.0	600.0	324.7	13	22277.4	72.5	987.2	150.3
Լոռու մարզ										
Ալավերդի	28	14560.5	233.7	2700.0	1401.5	19	22167.9	114.3	1388.9	216.8
Գուգարք	23	5595.0	105.8	4750.4	2007.9	19	19610.9	77.9	14083.3	1260.3
Սպիտակ	2	1442.2	216.0	245.0	230.5	7	8030.0	104.9	1348.3	204.5
Ստեփանավան						5	5327.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										

Արույան	76	23106.3	301.2	5438.0	3410.7	183	241323.4	264.5	35353.5	1971.4
Եղվարդ	30	22758.2	204.7	4604.0	2226.1	121	109538.4	173.6	27000.0	2860.3
Հրազդան	7	2251.8	397.5	3240.0	2470.8	29	27088.9	117.7	34848.5	1317.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	8	1801.5	2628.7	10500.0	5411.2	38	34817.2	113.6	18750.0	335.7
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	6	2201.3	244.2	1026.7	410.1	16	21712.6	67.9	180.6	199.6
Աշոցք						1	5560.0	40.8	144.0	65.0
Արթիկ	7	268.8	340.7	5500.0	2833.4	8	9227.7	111.8	5000.0	218.7
Սյունիքի մարզ										
Գորիս	1	835.0	744.9	744.9	744.9	8	8140.0	112.2	1700.0	365.2
Կապան	5	1130.1	712.9	2700.0	1745.4	7	6316.2	67.9	2638.9	347.6
Մեղրի	1	277.3	318.1	318.1	318.1	10	6768.0	68.5	632.9	257.1
Սիսիան	3	1718.0	393.3	607.2	517.4	12	10964.0	123.5	875.0	243.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						11	11168.7	96.7	7659.6	508.5
Վայք	1	120.0	875.0	875.0	875.0	2	2240.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						5	6064.7	75.8	810.0	125.3
Իջևան	10	11505.3	52.3	3000.0	1142.9	38	28568.6	74.1	14423.1	517.6
Նոյեմբերյան	3	1488.9	100.8	932.2	400.4	6	6975.8	125.0	1948.1	249.7

2015 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3667 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.8 %-ը:

2015 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 5.6 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 11.7 %-ով:

2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 220 բնակարանի, 315 անհատական բնակելի տան, 1735 հասարակական և 330 արտադրական նշանակության օբյեկտի, 995 հողի, 3 այգետնակի և 69 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 49 վարձակալության գործարքի քանակը, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 44.1 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 69.0 %-ով:

2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալված 24487.33 հա հողից 11.31 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 24476.02 հա հողից 2686.58 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 8.55 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 11.43 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 21538.73 հա, որից 346.79 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10396 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.7 %: 2015 թվականի երկրորդ կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը,

2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 40.2 %-ով , իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 20.7 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (49.5 %), առանձնատների (20.5 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.2 %) և հողերի (13.2 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5607 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 34.0 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 24.4 %-ով:

2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 852 գործարք, որից 577՝ Երևանում: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 39.9 %-ով, ընդ որում Երևանում՝ 29.1 %-ով, իսկ մարզերում՝ 69.8 %-ով: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 5.4 %-ով, ընդ որում Երևանում՝ 3.7 %-ով, իսկ մարզերում՝ 8.9 %-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել է 3546.72 հա մակերեսով հող, որից 32.64 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 43.8 % կամ 1554.32 հա գյուղատնտեսական նշանակության են, որից Երևանում՝ 0.30 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Լոռու մարզում՝ 1943.94 հա, որից 63.32 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 11121 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 7.3 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 6.2 %-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.4 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (25.5 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե